ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

02 ՀՄՀ/12 ԱՄՍ/1126-19
27.02.19թ.

Ձեր № 341-56
առ 20.02.2019թ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
նախագահ Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի փետրվարի 20-ի թիվ GW87-I92R-FMSD գրության՝ ներկայացնում ենք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության 2018 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթի պատճենը:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԳՐԱՆ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

2/26/2019

X

VERIFIED OCSP 2/26/2019 18:17:46 GMT+4

Signed by: ARZUMANYAN TIGRAN 3210860194

Ց Ա Ն Կ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և նրա համակարգում գաղտնագրման ենթակա տեղեկությունների ընդլայնված գերատեսչական

Հ/Հ	ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	Գաղտ. աստ.
1	2	3
1	Պատերազմի և արտակարգ իրավիճակներում զորահավաքային պատրաստականության վերաբերյալ տեղեկություններ:	ՀԳ
2	Զորահավաքային նախապատրաստության վերաբերյալ տեղեկություններ:	ՀԳ
3	Պատերազմի ժամանակ ՀՀ տնտեսության կայուն գործունեության նախապատրաստումը բացահայտող ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ:	ՀԳ
4	Պետության պաշտպանության և անվտանգության նպատակով անցկացվող գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական կամ նախագծային աշխատանքների բովանդակությունը և ուղղվածությունը բացահայտող տեղեկությունները:	ՀԳ
5	ՀՀ պաշտպանունակությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով ոլորտի ընկերությունների կամ/և դրանց ենթակառուցվածքն օգտագործելու վերաբերյալ տեղեկություններ:	ՀԳ
6	Տեղեկություններ համակարգի ռեժիմների վերաբերյալ, որոնք կարող են բացահայտել սույն ցանկի 5 և 16 կետերում նշված տեղեկությունները:	ՀԳ
7	Տեղեկություններ պետական պահուստի նյութական արժեքների ամբարման վայրերի, շարժի, քանակական և որակական ցուցանիշների վերաբերյալ:	Գ
8	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և դրա համակարգում առկա հատուկ տեղագրական և երկրաբաշխության քարտեզներ, պլաններ ու չափագծային սխեմաներ:	Գ
9	«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ պահեստային ղեկավարման կետի պաշտպանության և պահպանության վերաբերյալ տեղեկություններ:	Գ
10	«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ մերձակա և հեռավոր մատույցների պահպանության և պաշտպանության կազմակերպումը բացահայտող մեթոդների, միջոցների և գրաֆիկական տեղեկությունները:	Գ

11	«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ միջուկային վառելիքի տեղափոխման ուժերը, միջոցները, մեթոդները, պահեստային ճանապարհը և ֆիզիկական պաշտպանության ապահովման վերաբերյալ տեղեկություններ:	Գ
12	Պետական գաղտնիքի պաշտպանության կազմակերպումը կամ փաստացի վիճակը բացահայտող տեղեկություններ:	Գ
13	Հիդրոօդերևույթաբանության և գեոֆիզիկայի բնագավառում պետության պաշտպանության և անվտանգության նկատառումներով անցկացվող աշխատանքներն, ինչպես նաև հատուկ երկրաբանա-գեոֆիզիկական հետազոտությունների արդյունքները բացահայտող տեղեկություններ:	Գ
14	Պահուստային կառավարման կետերի տեղաբաշխվածությունը:	Գ
15	Արտակարգ և պատերազմական իրավիճակներում գործող կարգավարական կապի սխեմաների մասին տեղեկություններ:	Գ
16	Տեղեկություններ, որոնք բացահայտում են պաշտպանական արդյունաբերության ձեռնարկությունների և զորամասերի արտաքին էլեկտրամատակարարման, գազամատակարարման սխեմաները և նրանց սնուցման աղբյուրները:	Գ
17	Քինվորական արդյունաբերական և այլ պաշտպանական նշանակություն ունեցող օբյեկտներում կատարվող հետազոտական աշխատանքների արդյունքները:	Գ
18	Քաղ. պաշտպանության հետ կապված միջոցառումների իրականացման մասին:	Գ
19	Արտերկրների հետ կնքած արտահանման, ներմուծման և տարանցիկ պայմանագրերում ընդգրկված տվյալները, եթե գաղտնիությունը սահմանվել է ստորագրման ժամանակ:	Գ